ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆ

ՆՈՐ ՏԵՍԱԿԻ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՏԱՐԱԾՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) (այսուհետ՝ վարակ) տարածումը կանխելու և աշխատողների համար անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ ապահովելու նպատակով,

հիմք ընդունելով Պարետի 27.03.2020թ. թիվ 19 որոշման պահանջները,

ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ և 217-րդ հոդվածի 4-րդ մասի, 242-րդ հոդվածի, 243-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 5-րդ և 15-րդ կետերի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 17.3-րդ կետի 5-րդ, 22-րդ և 27-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 02.03.2018թ. թիվ 5/3-Լ որոշմամբ հաստատված՝ Հանրապետության փաստաբանների պալատի աշխատանքային ներքին կարգապահական կանոնակարգի 28-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով,

1. **ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալին, նախագահի տեղակալին, ֆինանսական տնօրենին, աշխատակազմի ղեկավարին և Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին՝** ներդնել անհրաժեշտ մեխանիզմներ աշխատանքը տնից (հեռավար և առցանց եղանակներով) կազմակերպելու համար՝ ապահովելով ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի դիմաց վարձատրությունն այն բոլոր դեպքերի համար, երբ կատարված աշխատանքի որակին և ժամկետներին ներկայացվող պահանջները պահպանված են:

2. **Աշխատակազմի ղեկավարին՝**

2.1. հարգելի համարել սուր շնչառական վարակներին բնորոշ ախտանշաններով (թեթև հազ, ջերմության բարձրացում և այլն) աշխատակիցների բացակայությունն աշխատանքից, բացառել վերջիններիս մուտքը աշխատավայր, իսկ եթե նման ախտանիշներն ի հայտ են գալիս աշխատանքի ընթացքում՝ անհապաղ առանձնացնել այն անձանց շրջանակը, ովքեր շփում են ունեցել վարակակիր անձի հետ և հայտնել ՀՀ առողջապահության նախարարություն և ապահովել աշխատակցի մեկուսացումը.

27 մարտի 2020թ.
թիվ 55-Լ

2.2. աշխատավայրում վարակի կասկածով աշխատակից ունենալու դեպքում զանգահարել ՀՀ առողջապահության նախարարության **թեժ գիծ (+374 60 83 83 00)**, հնարավորության դեպքում անմիջապես ապահովել այն տարածքի ախտահանումը, որտեղ աշխատել է աշխատակիցը, ինչպես նաև ցանկացած այլ տարածք և մակերես, որը կարող էր հասանելի լինել տվյալ աշխատակցին.

2.3. ՀՀ փաստաբանների պալատի աշխատողներին իրազեկել անվտանգ վարվելաձևի վերաբերյալ, այդ թվում՝

1) խուսափել այլ անձանց հետ սերտ շփումներից՝ ձեռքով բարևելուց, համբուրելուց, գրկախառնվելուց,
2) փոշտալիս կամ հազալիս փակել բերանն ու քիթն անձեռոցիկով կամ արմունկով (ոչ ձեռքով), իսկ օգտագործած անձեռոցիկն անմիջապես նետել փակ աղբարկղը,
3) հաճախակի լվանալ ձեռքերն օճառով և ջրով՝ առնվազն 20 վայրկյան, իսկ լվացվելու անհնարինության դեպքում ձեռքերը մաքրել ալկոհոլային հիմքով ախտահանիչներով,
4) քաղաքացիների հետ անմիջական շփումներ ունենալու պարագայում կրել դիմակներ և ձեռնոցներ.
5) խուսափել աչքերին, քթին, բերանին դիպչելուց,
6) խուսափել շնչառական վարակի ախտանիշ ունեցող անձանց հետ սերտ շփումից, իսկ անխուսափելի շփման դեպքում օգտագործել դիմակ՝ պահպանելով առնվազն 2 մետր հեռավորություն,
7) աշխատանքային օրվա մեկնարկին և ավարտին ախտահանել սեղանը, համակարգիչը, հաճախակի օգտագործվող այլ պարագաները:

3. **Ֆինանսական տնօրենին**՝

3.1. ապահովել միաժամանակ աշխատատեղում գտնվող մարդկանց քանակը նվազեցնելուն ուղղված ճկուն աշխատանքային պայմաններ բազմազավակ մայրերի, 60 և ավելի տարիք և/կամ շաքարային դիաբետ, սրտանոթային, շնչառական հիվանդություններ կամ այլ խրոնիկ հիվանդություններ ունեցող անձանց, հիվանդներին և երեխաներին խնամող աշխատակիցների համար.

3.2. ապահովել յուրաքանչյուր աշխատակցի ջերմությունը չափելու և տվյալները հաշվառելու աշխատանքները՝ նվազագույնը օրական երկու անգամ (հեռավար կամ անհատական օգտագործման ջերմաչափներով, այդ թվում՝ աշխատակիցների անձնական ջերմաչափներով), որից մեկը աշխատակցի աշխատանքի ներկայանալու ժամանակ.

3.3. ապահովել տարածքի ախտահանման աշխատանքները հետևյալ կարգով՝ օրական առնվազն երեք անգամ սահմանված ժամերի ախտահանելու տարածքը՝ դռների բռնակները, սեղանները, ձեռքով հաճախակի հպման մակերեսները (սարքերի մակերեսներ, լույսի անջատիչներ, սարքավորումների բռնակներ, հեռակառավարման վահանակներ, ընդհանուր օգտագործման հեռախոսներ, համակարգիչներ, ստեղնաշարեր և մկնիկներ, քաղաքացիների կողմից

օգտագործվող գրիչներ և այլն), սանհանգույցները, ձեռքերի հպման համար նախատեսված մակերեսները՝ ախտահանման համար կիրառելով քլորի հիմքով կամ 60-80% սպիրտ պարունակող ախտահանիչ նյութեր՝ ՀՀ առողջապահության նախարարության և/կամ այլ իրավասու մարմնի հրապարակած մեթոդական ուղեցույցին համապատասխան.

3.4. ապահովել աշխատատեղերի միմյանցից նվազագույնը 2 մետր հեռավորությունը.

3.5. ապահովել դիմակների կրումն այն աշխատակիցների կողմից, ովքեր անմիջական շփումներ ունեն քաղաքացիների հետ:

4. Սահմանել, որ վարակի տարածումը կանխելուն ուղղված ֆինանսական տնօրենի ցուցումները պարտադիր են ՀՀ փաստաբանների պալատի աշխատակիցների համար, իսկ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 28.02.2020թ. թիվ 43-Ա հրամանով ձևավորված խումբը գործում է ֆինանսական տնօրենի ղեկավարման ներքո:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

27 մարտի 2020թ.
ք. Երևան
թիվ 55-Լ